Էդուարդ Պողոսյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՆՈՐԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՄԻ ՇԱՐՔ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ (1990-2001 ԹԹ.)

Հայաստանի անկախությունը, որ նրան բերեց միջազգային սուբյեկտի ճանաչում, ռեալ հնարավորություններ ընձեռեց երկկողմանի փոխհարաբերությունների հաստատման համար եվրոպական պետությունների հետ՝ վերջնական նպատակ ունենալով ինտեգրվել հին աշխարհի քաղաքական, տնտեսական, մշակութային կառույցներին[1]:

Արևմտյան Եվրոպայի պետությունների հետ Հայաստանի երկկողմ հարաբերությունները կառուցվում էին հաշվի առնելով ինքնիշխան հայկական պետության տնտեսական ու քաղաքական նպատակադրումները, որոնց մեջ հատկապես կարևորվում էին երկրի պետական անկախության ամրապնդումը, Հայաստանի ժողովրդավարական կառույցների կայացմանը Եվրոպայի չափազանց արժեքավոր աջակցությունը, Ղարաբաղյան հիմնահարցի նկատմամբ այդ երկրների հայանպաստ դիրքորոշման ապահովումը, նրանց օժանդակությունը եվրոպական կառույցներին ՀՀ-ի ինտեգրմանը և, վերջապես, արևմտաեվրոպական երկրների գործուն օգնությունը նորանկախ Հայաստանում պետականության տնտեսական համակարգի վերափոխման ու հասարակական նոր հարաբերությունների ձևավորման պատմական գործընթացներին:

Եվրոպայի առաջատար երկրների հետ փոխհարաբերությունները կառուցվում էին հայ ժողովրդի ազգային շահերից բխող ակնկալիքների տեսանկյունով: Երկրներից մի մասի հետ Հայաստանի Հանրապետությունը առաջին պլան էր մղել քաղաքական հարաբերությունները: Ֆրանսիայի հետ Հայաստանի կապերը առավել խոր էին: Ֆրանսիան թվով 20-րդ պետությունն էր, որ 1992 թ. փետրվարին դիվանագիտական հարաբերություններ հաստատեց ՀՀ-ի հետ[2]: ՀՀ-ի անկախացումից հետո Ֆրանսիան ակտիվորեն աջակցում էր Հայաստանին ՄԱԿ-ին և միջազգային այլ հեղինակավոր կառույցներին անդամակցելու գործում: Հենց սկզբից ՀՀ իշխանությունները լիահույս էին, որ Ֆրանսիան միջազգային ատյաններում որդեգրելու է Ղարաբաղյան հարցի լուծման հայանպաստ դիրքորոշում և անպայման ներազդելու է Թուրքիայի վրա՝ կանխելով վերջինիս անցանկալի միջամտությունը հայ-ադրբեջանական առճակատման գործում[3]: Բոլոր ոլորտներում երկու երկրների պետական իշխանությունների միջև ձևավորվեցին ամենասերտ հարաբերություններ: Քննարկվող ժամանակահատվածում գրեթե պարբերական էին դարձել ՀՀ նախագահների պաշտոնական այցերը Ֆրանսիա (1993 թ., 1996 թ., 2000 թ.), նրանց հանդիպումները բարեկամ երկրի ղեկավարների, բարձրաստիճան պաշտոնյաների, գործարար աշխարհի ներկայացուցիչների հետ[1]: Հաճախակի էին նաև Հայաստանի պետական պաշտոնյաների, ՀՀ խորհրդարանի ղեկավարների և պատգամավորական խմբերի պաշտոնական ու աշխատանքային այցերը, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների այցելությունները Ֆրանսիայի Հանրապետություն[2]: Միաժամանակ պարբերական էին դարձել Ֆրանսիայից համանման մակարդակների այցելությունները Հայաստանի Հանրապետություն[3]: Նման փոխայցելությունների արդյունքում էլ կայացվում էին երկու երկրների միջև քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներին վերաբերող համաձայնություններ, կնքվում՝ պայմանագրեր: Այդ փաստաթղթերի մեջ հատկապես առանձնանում էր 1993 թ. մարտին երկու երկրների նախագահների միջև կնքված «Համաձայնության, բարեկամության և համագործակցության» պայմանագիրը, որով նախատեսվում էր ՀՀ և Ֆրանսիայի միջև հաստատել սերտ համագործակցություն միջազգային կառույցներում, Ֆրանսիայի ամենագործուն աջակցությունը Հայաստանին այդ հաստատություններում անդամակցելու համար, նորանկախ Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման ու իրավական պետության կայացման ոլորտում և այլն: Հետագայում հայ-ֆրանսիական փոխհարաբերությունների իրավական դաշտը համալրվեց միջպետական, միջգերատեսչական, միջխորհրդարանական և այլ մակարդակներով կնքված նոր փաստաթղթերով:

Ֆրանսիան ի թիվս նորանկախ ՀՀ-ի բարեկամ այլ երկրների լրջագույն ներդրում ունեցավ ՄԱԿ-ին, ԵԱՀԿ-ին և Եվրոպայի Խորհրդին ու միջազգային այլ հեղինակավոր կառույցներին Հայաստանի անդամակցության հարցում: Ֆրանսիական Հանրապետությունը, որպես Մինսկի խմբի համանախագահող երկիր, խնդրո առարկա ժամանակահատվածում լուրջ ջանքեր էր ներդնում Արցախի հիմնախնդրի արդարացի լուծման ուղղությամբ: Չափազանց մեծ էր Ֆրանսիայի դերակատարությունը նաև Հայոց ցեղասպանության հարցի միջազգայնացման գործընթացում[4]: Հարկ է անպայման նշել, որ և՛ քաղաքական, և՛ այլ ոլորտներում հայ-ֆրանսիական ամենասերտ համագործակցության հաստատման գործընթացներում զգալի դեր էին խաղում երկու ժողովուրդների մշակութային մերձությունն ու Ֆրանսիայում հայկական ստվար գաղութի առկայությունը: Հատկապես սերտ էին հայ-ֆրանսիական մշակութային կապերը: Բերենք ասվածը հաստատող առավել հատկանշական բազմաթիվ օրինակներից մի քանիսը: Այսպես, 1993 թ. հոկտեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի ղեկավարների անմիջական մասնակցությամբ Փարիզի Սորբոնի համալսարանի մատուռում մեծ հանդիսավորությամբ բացվեց Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Արմեն-Կլոդ-Մութաֆյանի տքնաջան աշխատանքի շնորհիվ կազմակերպված «Կիլիկիայի հայկական թագավորություն, 12-14-րդ դարեր» ցուցահանդեսը: Ցուցանմուշները բերվել էին Բրիտանական թանգարանից, Ս. Պետերբուրգի էրմիտաժից, Հայաստանի, Իտալիայի, Իսպանիայի, Լիբանանի թանգա-

[1] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 68, թ. 11-13:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 25 փետրվարի, 1992 թ.:
[3] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 35, թ. 9-10:

[1] «Հայաստանի Հանրապետություն», 13, 16, 17 մարտի, 1993 թ., 12, 14 հունիսի, 1996 թ., 1, 5 հուլիսի 2000 թ.:
[2] Նույնը, 17 ապրիլի, 1992 թ., 22 հունվարի, 1994 թ., 31 մարտի 1999 թ.:
[3] Նույնը, 10 մարտի, 1 հունիսի, 14 հուլիսի, 7 նոյեմբերի, 1992 թ., 20 հունվարի, 1993 թ., 17 հոկտեմբերի 1996 թ., 8 հունվարի, 1998 թ., 8 սեպտեմբերի, 1999 թ., 18 ապրիլի, 2000 թ.: Նաև՝ ՀԱԱ, ֆ.113, ց. 177, գ. 509, թ. 1-2:
[4] «Հայաստանի Հանրապետություն», 22 հունիսի, 1994 թ.:

ռաններից[1]: 1996 թվականին Նանտ քաղաքում ավելի քան վեց ամիս բացառիկ հաջողությամբ գործեց Հայաստանի թանգարաններից բերված ցուցանմուշներով ձևավորված «Հայաստան. ակունքներից մինչև 4-րդ դար» ցուցահանդեսը[2] և այլն: Հայ-ֆրանսիական մշակույթի, հատկապես կրթության բնագավառում համագործակցության թերևս կարևորագույն ձեռքբերումներից էր 2000 թվականի ամռանը Երևանում ֆրանսիական համալսարանի բացումը[3]:

Բերված և բազմաթիվ այլ փաստերը վկայում են, որ քննարկվող ժամանակահատվածում բարձր մակարդակի վրա դրված հայ-ֆրանսիական կրթամշակութային հարաբերությունները սկսում են կրել ավանդական բնույթ: Ցավոք, այդ իրողությունը չէր ամբողջանում լիարժեք տնտեսական համագործակցությամբ: Այսպես, 2000 թվականին Հայաստանի և Ֆրանսիայի միջև առևտրաշրջանառությունը կազմել էր ընդամենը 18,5 մլն ԱՄՆ դոլար[4], որը, ինչ խոսք, անչափ ցածր ցուցանիշ էր փոխգործունեության մյուս ոլորտներում ձեռք բերված աննախադեպ բարձր բնագծերի համեմատությամբ: Հայ-ֆրանսիական տնտեսական փոխգործունեության ոլորտում, թերևս, ամենանշանակալի իրադարձությունը 1998 թվականին ֆրանսիական «Պեռնո Ռիկար» ընկերության կողմից Երևանի կոնյակի գործարանի գնումն էր: Ֆրանսիական այդ ընկերության և ՀՀ կառավարության միջև կայացած գործարքի գումարը ևս մեծ չէր և հազիվ հասնում էր 30 մլն դոլարի, որն էլ ի դեպ վճարվելու էր մասերով[5]:

Գերմանիայի հետ փոխհարաբերությունները առավելապես տնտեսական բնույթի էին: Գերմանական կազմակերպությունները մարզային, շրջանային մակարդակներով Հայաստանում իրականացնում էին մի շարք ծրագրեր՝ ուղղված կանանց աշխատանքով ապահովելուն, պարենային օգնություն տրամադրելուն և այլն: Հաջող էին զարգանում նաև միջպետական մշակութային կապերը: Գործում էր Գերմանիայի և Հայաստանի միջև կնքված մշակութային համաձայնագիր, որի կենսագործման նպատակով ակտիվ աշխատանքներ էր տանում միջգերատեսչական խառը հանձնաժողովը[6]: Ինչպես արդեն նշվեց, հատկապես ակտիվ էին հայ-գերմանական տնտեսական կապերը, որի արդյունքում աշխուժացել էին երկու երկրների գործարար շրջանների ներկայացուցիչների փոխայցելությունները, ընթացքի մեջ էր երկու երկրների միջև տրանսպորտային կապերի հաստատման և ամրապնդման գործընթացը, ամրապնդվում էին երկու երկրների տնտեսական բնագավառները ղեկավարող պետական օղակների միջև կապերը, կնքվում էին առևտրաշրջանառությանը, ներդրումներին, ֆինանսական և այլ ոլորտներին վերաբերող փոխշահավետ պայմանագրեր[7]: ՀՀ և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև կայուն էին նաև քաղաքական հարաբերությունները: Կայացված համաձայնությունների համապատասխան՝ Գերմանիան գործնականում աջակցում էր Հայաստանի՝ եվրակառույցներին անդամակցությանը, հասարակական կյանքի ազատականացմանը[1]: Գերմանական կողմը մասնակցում էր նաև նորանկախ Հայաստանին մարդասիրական օգնության ցուցաբերմանը:

Միջպետական հարաբերությունների ոլորտներում ծավալված երկու երկրների բավականին բեղմնավոր համագործակցության պայմաններում ըստ էության փոխվում էին նաև հայ ու գերմանացի ժողովուրդների մոտ առկա կարծրատիպերը միմյանց վերաբերյալ: Այդ առումով չենք կարող, չանդրադառնալ նորանկախ Հայաստանի և Գերմանիայի միջև մարդասիրական փոխգործունեության ոլորտին վերաբերող բավականին հատկանշական մի փաստի: Տակավին դեռ Հայաստանի անկախացման տարում հանրապետությունում ձևավորված հասարակական կազմակերպության ջանքերով, հատկապես 1990-ականների կեսերին, մեծ թափ ստացան հանրապետությունում Երկրորդ համաշխարհային պատերազմում մահացած գերմանացի ռազմագերիների գերեզմանատեղերի հայտնաբերման և բարեկարգման աշխատանքները: Այդ նպատակով հայկական կազմակերպության հետ ակտիվորեն համագործակցում էին նաև գերմանական հասարակական ու պետական կառույցները[2]: Աշխատանքների համակարգման նպատակով 1995 թվականին նույնիսկ հատուկ պայմանագիր կնքվեց ՀՀ և Գերմանիայի Դաշնության կառավարությունների միջև[3]: ՀՀ Նախարարների խորհրդի որոշմամբ արգելվեց ռազմագերիների գերեզմանատեղերի տարածքների սեփականաշնորհումն ու այդ վայրերում կառուցապատման աշխատանքներ իրականացնելը[4] և այլն:

Շոշափելի արդյունքներ էին արձանագրվում նաև աշխարհի մյուս երկրներին ՀՀ հարաբերություններում: Մեծ Բրիտանիայի հետ հատկապես զարգանում էին տնտեսական և մասնավորապես ֆինանսական բնույթի հարաբերությունները, որոնց տպավորիչ դրսևորումներից էր աշխարհի 65 երկրներում շուրջ 3 հազար մասնաճյուղ ունեցող անգլիական հայտնի «Միդլենդ» բանկի «Միդլենդ Արմենիա» մասնաճյուղի հիմնումը 1996 թվականին Հայաստանում, որը կարևոր քայլ էր հանրապետության ֆինանսավարկային համակարգի հետագա զարգացման գործում:

Այն դարձավ միջպետական առաջին ֆինանսական կառույցը, որի միջոցով ինչպես օտարազգի, այնպես էլ աշխարհի տարբեր անկյուններում գործող հայազգի գործարարները հնարավորություն ստացան ներդրումներ անել ՀՀ տնտեսության մեջ[5]: Իր գործունեության առաջին տարվա ընթացքում բանկը Հայաստանի գործարարներին տրամադրել էր արդեն մոտ 40 կարճաժամկետ վարկեր՝ 10 հազարից մինչև 1 մլն դոլար ծավալով[6]:

Հասարակական հարաբերությունների բոլոր հիմնական ոլորտներում ակտիվ փոխհարաբերություններ էին հաստատվել Սիրիայի, Հունաստանի, Բուլղարիայի,

---

[1] Նույնը, 29 հոկտեմբերի, 1993 թ.:
[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 177, գ. 78, թ. 1-2:
[3] Հայաստանի Հանրապետություն, 19 հուլիսի, 2000 թ.:
[4] Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Եր., 2001 թ., էջ 468:
[5] Հայաստանի Հանրապետություն, 2, 13 հունիսի, 11 հուլիսի, 26 նոյեմբերի, 1998 թ.:
[6] Նույնը, 18 սեպտեմբերի, 1996 թ.:
[7] ՀԱԱ, ֆ. 113, ց. 168, գ. 251, թ. 1-2, «Հայաստանի Հանրապետություն», 22 դեկտեմբերի, 1995 թ., 2 օգոստոսի, 1996 թ., 9 հունվարի, 2000 թ., Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 16, 7 հուլիսի, 1997 թ., էջ 30, «Հայաստանի Հանրապետություն», 8 հուլիսի, 1998 թ., Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 4(37), 24 փետրվարի, 1998 թ., «Հայաստանի Հանրապետություն», 19 հունվարի, 2000 թ., Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 25 (123), 31 հոկտեմբերի, 2000 թ., էջ 14, «Հայաստանի Հանրապետություն», 6 հոկտեբերի, 2001 թ.:

---

[1] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 68, թ. 12, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 1-2 (1077-1078), հունվար, 1995 թ., էջ 13-14, «Հայաստանի Հանրապետություն», 26 հուլիսի, 2000 թ.:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 4 մարտի, 1999 թ.:
[3] Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու, 1991-1995 թթ., Երևան, 2002 թ., էջ 701-704, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 8 (74) 1 ապրիլի, 1999 թ., էջ 34:
[4] «Հայաստանի Հանրապետություն», 4 մարտի, 1999 թ.:
[5] Նույնը, 21 հունիսի 1995 թ., 19 մարտի, 5 հոկտեմբերի, 1996 թ.:
[6] Նույնը, 15 մարտի, 1997 թ.:

Ռումինիայի, Չինաստանի, Լիբանանի, Կիպրոսի[1] և այլ երկրների հետ: Սիրիայի նկատմամբ Թուրքիայի ագրեսիվ քաղաքականության ֆոնի վրա, տարածաշրջանային շահերի ընդհանրության պայմաններում, բավականին արագ ձևավորվեցին հայ-սիրիական քաղաքական և առևտրատնտեսական հարաբերությունները: Երկու երկրների պետական, կառավարական, խորհրդարանական, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, գիտության, արվեստի ու մշակույթի, գործարար շրջանների ներկայացուցիչների ամենատարբեր մակարդակների պատվիրակությունների փոխայցելությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև ծավալվել էր լուրջ երկխոսություն փոխգործունեության բոլոր ոլորտներում[2]: Երկու երկրների միջև կնքվել էին միջպետական բազմաբնույթ պայմանագրեր: Առաջիններից մեկը 1992 թվականին կնքված մշակութային համագործակցության համաձայնագիրն էր, որով էլ հիմք էր դրվել Հայաստանի և Սիրիայի մշակութային, գիտական և կրթական բնագավառներում ակտիվ կապերին[3]: 1992 թվականից մինչև 2001 թվականը Հայաստանի և Սիրիայի միջև ստորագրվել էր թվով 8 կարևորագույն տնտեսական համաձայնագիր առևտրի, ցամաքային, օդային փոխադրումների, տնտեսական և գիտատեխնիկական, կրկնակի հարկումից խուսափելու, գյուղատնտեսության, զբոսաշրջության բնագավառներում համագործակցելու մասին[4]:

Ավանդաբար սերտ էին նաև փոխգործունեության դարավոր պատմություն ունեցող հայ-հունական հարաբերությունները: Տնտեսական ոլորտում հիմքը հանդիսացավ երկու երկրների կառավարությունների միջև կնքված «Տնտեսության, արդյունաբերության և տեխնիկայի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը[5]: Հետագայում Հայաստանի և Հունաստանի միջև կայացվեցին բազմաթիվ այլ տնտեսական համաձայնություններ, որոնք հնարավոր դարձրին Հունաստանից սննդամթերքի անվճար առաքումները, Հայաստանին խոշոր վարկերի տրամադրումը, ՀՀ-ում ներդրումներ կատարելը, համատեղ ձեռնարկությունների հիմնումը[6] և այլն: Առավել տպավորիչ էր արդեն կնքված համաձայնագրերի կենսագործման գործընթացը: Այսպես, 1994 թ. ընթացքում մարդասիրական նպատակներով Հունաստանը Հայաստանին էր հատկացրել 1 մլն 750 հազ. դոլարի օգնություն, իսկ 1995 թ. երկու երկրների կառավարությունների միջև ստորագրված սննդամթերքի անվճար առաքման իրականացման մասին հուշագրով Հունաստանը Հայաստանին անվճար տրամադրեց ևս 5000 տոննա ցորեն[7], որը ըստ էության նաև քաղաքական իրադարձություն էր երկու երկրների հարաբերություններում ու ևս մեկ անգամ ապացուցեց Հայաստանի և Հունաստանի, հայ և հույն ժողովուրդների անխախտ բարեկամությունը: 1997 թ. Հայաստանի Հանրապետության և Հունաստանի Հանրապետության կառավարությունների միջև կնքվեց մարդասիրական նպատակներով

[1] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 68, թ. 17:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 7 մարտի, 25 ապրիլի, 16 հուլիսի, 1992 թ., ՀԱԱ, ֆ. 113, ց. 168, գ. 139, թ. 1-3, ց. 177. գ. 431, թ. 1-2, «Հայաստանի Հանրապետություն», 2 մայիսի, 1995 թ., 24 նոյեմբերի, 1998 թ.:
[3] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 147, թ. 1-47: «Հայաստանի Հանրապետություն», 2 սեպտեմբերի, 2000 թ.:
[4] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 19 (1023), 15 հոկտեմբերի 1992 թ., «Հայաստանի Հանրապետություն», 18 սեպտեմբերի, 1995 թ., Անանյան Լ. Ղ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Եր., 2003 թ., էջ 214:.
[5] ՀԱԱ, ֆ. 113, ց. 167, գ. 210, թ. 1-3:
[6] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 6 (39), 14 մարտի, 1998 թ., էջ 21:
[7] «Հայաստանի Հանրապետություն», 26 հոկտեմբերի, 1995 թ.,

սննդամթերքի առաքման մի նոր հուշագիր[1], որն էլ հնարավոր դարձրեց հաջորդ տարի Հունաստանից Հայաստան մեծ քանակությամբ բարձրարժեք կարծր ցորենի ներկրումը[2] և այլն: Գնալով ավելի էր ակտիվանում նաև երկու երկրների միջև ֆինանսական համագործակցությունը: Հայաստանը հունական կողմից ստանում էր ցածր տոկոսադրույքներով բավականին ներշնչող չափերի վարկեր: Գոյություն ունեցող իրավական դաշտի շրջանակներում ջանքեր էին կիրառվում հայ-հունական առևտրատնտեսական կապերն աշխուժացնել և նոր որակի հասցնել, երկու պետությունների գործարարների միջև սերտ կապեր ձևավորել[3]: Հայաստանի և Հունաստանի տնտեսական համագործակցությանը նոր որակ հաղորդեցին 1999 թ. մայիսին Հունաստանի Հանրապետության նախագահ Կ. Ստեֆոպուլոսի գլխավորած պատվիրակության Հայաստանի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի ընթացքում մաքսային ծառայությունների փոխգործունեության, ինչպես նաև Հայաստանի և Հունաստանի միջև առևտրաշրջանառության գործընթացներում կրկնակի հարկումը բացառելու ու պարտադիր հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ միջկառավարական համաձայնագրերը[4]: Ինչ վերաբերում է քաղաքական փոխգործունեությանը, ապա հարկ է նշել, որ սկզբից ևեթ Հունաստանը և՛ Ղարաբաղյան հիմնախնդրի առումով, և՛ հայ-թուրքական լարված հարաբերությունների հարցում վարում էր հետևողական հայանպաստ քաղաքականություն և մշտապես կողմ է եղել Ղարաբաղի ինքնորոշմանը[5]: Հայ-հունական քաղաքական միջպետական հարաբերությունների անկյունաքարը դարձավ 1996 թվականին երկու երկրների միջև կնքված «Հայաստանի Հանրապետության և Հունաստանի Հանրապետության միջև համաձայնության, բարեկամության և համագործակցության մասին» պայմանագիրը[6]: Հունաստանը ամենաակտիվ կերպով աջակցում էր Հայաստանի նորանկախ հանրապետությանը միջազգային կառույցներում և հատկապես Եվրախորհրդին նրա անդամակցության հարցում: Բավականին ակտիվ կապեր էին ստեղծվել նաև երկու երկրների խորհրդարանների միջև: Հատկապես նկատելի էր միջազգային կառույցներում հայ և հույն օրենսդիրների փոխհամաձայնեցված, երկու ժողովուրդների շահերից բխող սերտ համագործակցությունը[7]: Հայաստանի անկախացմամբ ձևավորված հայ-հունական միջպետական հարաբերությունները վերլուծելիս չենք կարող չանդրադառնալ այդ երկու պետությունների ռազմական համագործակցությանը, որը ևս թելադրված էր նախ և առաջ Հայաստանի և Հունաստանի միջև դարերի ընթացքում ձևավորված ավանդական հարաբերություններով: Դա պայմանավորված էր նաև տարածաշրջանում երկու երկրների առջև ծառացած քաղաքական խնդիրների ընդհանրությամբ՝ մասնավորապես կապված Թուրքիայի հետ: Հայաստանի Հանրապետության և Հունաստանի միջև ռազմաքաղաքական շահերի բացառիկ ընդհանրության վկայությունն էր նաև այն, որ դեռ հայ-հունական միջպետական հարաբերությունների սաղմնավորման շրջանում՝ 1992 թվականի վերջերին, ադրբեջանական կողմի ձեռնարկած ագրեսիային դիմագրավելու նպա-

[1] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 6 (39), 14 մարտի, 1998 թ., էջ 21:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 12 դեկտեմբերի, 1998 թ.:
[3] Նույնը, 22 մարտի, 1997 թ.:
[4] Նույնը, 13 մայիսի, 1999 թ.:
[5] «Հայաստանի Հանրապետություն», 10 հունվարի, 10 ապրիլի, 17 հուլիսի, 1999 թ.:
[6] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 4, 10 մարտի, 1997 թ., էջ 8:
[7] Նույնը, 18 փետրվարի, 1999 թ.:

տակով հունական կողմը Հայաստանին առաջարկել էր իր զինված աջակցությունը[1], որը, ըստ էության, մի յուրօրինակ նախազգուշացում-հաղորդագրություն էր հայ-ադրբեջանական առճակատման հարցում ռազմատենչ գործելակերպ որդեգրած Թուրքիային: Տակավին 1996 թվականին երկու երկրների միջև ստորագրվել էին պաշտպանության ոլորտին վերաբերող երկու կարևոր փաստաթուղթ՝ ռազմաքաղաքական համագործակցության պայմանագիրը[2] և «Սպառազինության ու պաշտպանական տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը[3], որոնց համապատասխան էլ Հունաստանը Հայաստանին տրամադրում էր զենք ու զինամթերք, իրականացվում էր հայ երիտասարդների ուսուցումը Հունաստանի ռազմական ուսումնական հաստատություններում, կայանում էին երկու երկրների պաշտպանական գերատեսչությունների բարձրաստիճան ներկայացուցիչների պատվիրակությունների պարբերական փոխայցելություններ, որոնց ընթացքում քննարկվում էին համագործակցության ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական ոլորտներին վերաբերող հարցեր, նախանշվում փոխգործունեության նոր հորիզոններ[4]: Ընդհանրապես, ռազմական համագործակցությունը հայ-հունական ամենասերտ գործակցության ոլորտներից մեկը հանդիսանալով՝ պարբերաբար ամրապնդվում էր միջպետական և միջգերատեսչական նորանոր պայմանագրերով ու համաձայնություններով: Այսպես, 1999 թվականին երկու երկրների պաշտպանական գերատեսչությունների միջև կնքվել է ևս մեկ կարևոր նշանակության համաձայնագիր, որով Հայաստանի ու Հունաստանի պաշտպանական ծյուղերի միջև համագործակցություն էր նախատեսվում ռազմական պատրաստության և հետազոտությունների, նաև տեղեկատվության փոխանակման բնագավառում[5]:

Քննարկվող ժամանակահատվածում տարածաշրջանում ոչ մի ասիական պետություն չուներ այնպիսի ուժեղ և համապարփակ ազդեցություն, ինչպես Չինաստանը: Չինաստանի հետ Հայաստանի փոխհարաբերությունները կառուցվում էին ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կայուն շահերի ընդհանրության վրա: Հայ-չինական հարաբերությունների ներկապնակը այդ իմաստով օտար երկրների հետ ՀՀ փոխհարաբերությունների համակարգում ամենաբազմակողմանիներից մեկն էր՝ տնտեսական, քաղաքական, գիտատեխնիկական, մշակութային, առողջապահական ու կրթական ոլորտներ[6] և այլն: Սկսած 1992 թվականից, երբ դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Հայաստանի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև, երկու երկրները պարբերաբար փոխանակում էին տարբեր մակարդակների պատվիրակություններ[7]: Փոխայցելությունների արդյունքը դարձավ մի

[1] **Арутюнян В. Б.**, События в Нагорном Карабахе, Хроника, Часть IV, январь 1991 г. январь 1993 г., Ер., 1994 г., с. 223.

[2] Նույնը, 16 հուլիսի, 1997 թ.:

[3] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 7 (139), 5 մարտի, 2001 թ., էջ 49:

[4] «Հայաստանի Հանրապետություն», 19 հունիսի, 1997 թ., 18 հունիսի, 1999 թ., 29 օգոստոսի, 2000 թ., Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 9 (75),15 ապրիլի, 1999 թ., էջ 31, № 21 (119), 1 սեպտեմբերի, 2000 թ., էջ 63, № 7 (139), 5 մարտի, 2001 թ., **Կարապետյան Ա.**, Հայ-հունական հարաբերությունները 1991-1998 թթ., Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար, Երևան, 2004 թ., էջ 81, 90:

[5] «Հայաստանի Հանրապետություն», 20 հոկտեմբերի, 1999 թ.:

[6] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 19 (1023), 15 հոկտեմբերի, 1992 թ., էջ 83-91:

[7] «Հայաստանի Հանրապետություն», 2 հուլիսի, 27 օգոստոսի, 1992 թ., 16 ապրիլի, 7 մայիսի, 18 սեպտեմբերի, 1996 թ., 23 հուլիսի, 1998 թ., 28 ապրիլի, 1999 թ., 15 նոյեմբերի, 2000 թ., ՀԱԱ, ֆ. 113, ց. 168, գ. 121, թ. 1-2, գ. 310, թ. 1:

շարք համաձայնագրերի ստորագրումը, որոնք անհրաժեշտ իրավական դաշտ ստեղծեցին բեղմնավոր համագործակցության զարգացման համար: Հարկ է արձանագրել, որ բոլոր պարագաներում հայ-չինական հարաբերություններում գերակշռողը տնտեսական փոխգործունեությունն էր, որը ներառում էր ոչ միայն առևտրական շրջանառությունը, այլև փոխգործունեության այլ ձևեր, ինչպես, օրինակ, համատեղ արտադրությունների հիմնում, ներդրումային քաղաքականություն, տեխնոլոգիական պրոցեսների փոխանակում և այլն[1]: Հայաստանի և Չինաստանի առևտրատնտեսական հարաբերությունների իրավանորմատիվային հիմքը գործնականորեն ձևավորվել էր արդեն 1999-2000 թվականներին: 1992 թվականից ի վեր ստորագրվել էին տնտեսական բնույթի բոլոր ամենաանհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես՝ առևտրատնտեսական համագործակցության, կապիտալ ներդրումների խրախուսման և ներդրումների փոխադարձ պաշտպանության, օդային հաղորդակցության հաստատման, եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և ներկրման հարկերի վճարումից խուսափելը կանխելու վերաբերյալ և այլ միջպետական համաձայնագրեր[2]: Երկու երկրների տնտեսական համագործակցության հետագա դինամիկ զարգացման նպատակով 1999 թ. ստեղծվեց առևտրատնտեսական համագործակցության հայ-չինական միասնական հանձնաժողով[3]: Հայ-չինական տնտեսական համագործակցության տպավորիչ դրսևորումներից էին Չինաստանից դեպի Հայաստանի Հանրապետություն ապրանքների արտահանման և դրանց վճարման համար ՀՀ-ին չնչին տոկոսադրույքով ավելի քան 30 մլն յուան վարկի տրամադրման և Հայաստանի համար բավական շահավետ 1992-1996 թթ. գործարքը[4], 2000 թ. կնքված Չինաստանում քլորոպրենային կաուչուկի համատեղ ձեռնարկության շինարարության նախաձեռնումը[5]: Մշակվել էին էներգետիկայի ոլորտում երկու երկրների համագործակցության ծրագրեր: 2001 թ. չինական ընկերությունը մրցույթում շահել էր Հրազդանի ՊՇԷԿ-ի 7-րդ բլոկի վերականգնման իրավունքը, և չին մասնագետները ամբողջ թափով իրականացնում էին վերականգնողական աշխատանքներ[6]: Հայաստանի անկախացումից հետո հայ և չին ժողովուրդների միջև դարավոր համակրանքը վերածվեց իսկական մարդկային ջերմ բարեկամության:

Չինաստանի և Հայաստանի միջև ձևավորված փոխհարաբերությունների հատկանշական գծերից էր անհրաժեշտության պարագայում միմյանց օգնության ձեռք մեկնելու պատրաստակամությունը, որը մեկ անգամ չէ, որ ապացուցել էր չինական կողմը: Արդարությունը պահանջում է ասել, որ Հայաստանի Հանրապետությունը ևս ՉԺՀ-ի հետ իր հարաբերություններում հետևողականորեն դավանում էր երկու բարեկամ երկրների միջև արդեն ավանդույթի ուժ ստացած մարդասիրական վեհ սկզբունքներ: Ասվածի ապացույցներից է տակավին 1996 թվականի գարնանը Չինաստանում տեղի ունեցած երկրաշարժից տուժած բնակչությանը դեռևս տնտեսական

[1] **Մելքումյան Ս.**, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002 թ., էջ 221:

[2] «Հայաստանի Հանրապետություն», 4 օգոստոսի, 1999 թ., Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղկագիր, № 19 (1023), 15 հոկտեմբերի, 1992 թ., էջ 74-80, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, № 17-18 (1117-1118), սեպտեմբերի, 1996 թ., էջ 29-30, № 12, 5 հունիսի, 1997 թ., էջ 38, № 23, 14 հոկտեմբերի, 1997 թ., էջ 25-44:

[3] «Հայաստանի Հանրապետություն», 4 օգոստոսի, 1999 թ.:

[4] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 19 (1023), 15 հոկտեմբերի, 1992 թ., էջ 81-83:

[5] «Հայաստանի Հանրապետություն», 29 դեկտեմբերի, 2000 թ.:

[6] Նույնը, 23 հունիսի, 2001 թ.:

ծանր կացության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության կողմից անհապաղ օգնություն տրամադրելու փաստը[1]: Իսկ Հայաստանին պատուհասած 2000 թվականի տնական երաշտի ու սակավաջրության հետևանքների մեղմացման նպատակով Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից 2001 թվականին ՀՀ ներկրվեց 1000 տոննա պարենային ցորեն[2] և այլն:

Հայաստանի քաղաքական անկախության նվաճմանը հաջորդած շուրջ տասը տարիների ընթացքում ամենատարբեր տիպի միջպետական կապեր են հաստատվել քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտակրթական և այլ բնագավառներում միմյանցից էապես տարբերվող բազմաթիվ երկրների հետ:

Ակտիվ կապեր են հաստատվել Կանադայի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Ռումինիայի, Բուլղարիայի, Բելգիայի, Լիբանանի, Իտալիայի, Նիդերլանդների, Կիպրոսի, Լեհաստանի, Շվեյցարիայի, Եգիպտոսի, Ճապոնիայի, Ֆինլանդիայի, Հնդկաստանի, Ավստրիայի, Արգենտինայի, Ուրուգվայի, Ավստրալիայի, Իսպանիայի, Ինդոնեզիայի, Լատվիայի, Էստոնիայի, Հարավաֆրիկյան Հանրապետության և այլ պետությունների հետ: Հասկանալի է, որ այդ երկրների հետ ձևավորված միջպետական կապերի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կայացրել էր մեծ քանակության տնտեսական բնույթի համաձայնություններ, կնքել պայմանագրեր:

Հասկանալի է, որ մեկ հետազոտության շրջանակներում հնարավոր չէ հանգամանորեն անդրադառնալ թվարկված և բազմաթիվ այլ երկրների ու Հայաստանի Հանրապետության միջև ձևավորված ամենաբազմաբնույթ տիպի փոխհարաբերություններին, ուստի մենք բավարարվեցինք միայն միջազգային ասպարեզում Հայաստանի Հանրապետության համար համեմատաբար առավել լուրջ դերակատարում ունեցող պետությունների հետ ձևավորված փոխհարաբերություններին: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, թե մյուս երկրների հետ ՀՀ հարաբերությունները ոչ լիարժեք էին կամ էլ ոչ այնքան էական: Այսպես, 2000 թ. ապրանքների արտահանման առումով Նիդերլանդները և Արաբական Միացյալ Էմիրությունները գտնվում էին առաջին տասը պետությունների շարքում[3], իսկ Հայաստանի Հանրապետությունից արտահանումը Բելգիա կազմում էր Եվրամիության երկրներ առաքված արտադրանքի ընդհանուր արժեքի 60-70 տոկոսը[4]: Բելգիան ՀՀ-ից ապրանքներ ներմուծող (1998-ից մինչև 2000 թվականը ներառյալ) աշխարհում առաջին պետությունն էր[5], իսկ 2000 թվականին՝ երրորդը[6]: Ի դեպ Հայաստանի հետ տնտեսական հարաբերություններում Բելգիայի առաջատար դերը արդեն դարձել էր ավանդական: Հիշեցնենք ընդամենը, որ դեռ 1994 թ. ՀՀ հետ ապրանքաշրջանառության ցուցանիշներով Բելգիան երրորդ երկիրն էր Ռուսաստանից և Իրանից հետո[7]: Բելգիայի տեսակարար կշիռը բարձր էր նաև Եվրամիությունից Հայաստան ներմուծվող արտադրանքի ընդհանուր արժեքում: Այսպես, 2000 թվականին ԵՄ-ի երկրներից Հայաստան ներմուծված արտադրանքի ավելի քան 1/4-ը առաքել էր Բելգիան, ընդհան-

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 177, գ. 179, թ. 1-2:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 14 սեպտեմբերի, 2001 թ.:
[3] **Մելքումյան Ս.**, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002 թ., էջ 248:
[4] Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Եր., 2001 թ., էջ 467-469:
[5] Նույն տեղում, էջ 471:
[6] ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002, Եր., էջ 497:
[7] «Հայաստանի Հանրապետություն», 6 հունվարի, 1995 թ.:

ռապես, արտերկրից դեպի Հայաստան արտադրանք առաքած երկրների մեջ Բելգիան երրորդն էր[1]: Հայաստանի հետ առևտրաշրջանառության ոլորտում Բելգիայի առաջատար դիրքը հիմնականում պայմանավորված էր երկու երկրների միջև բավականին թանկարժեք ադամանդագործական արտադրանքի առևտրի խոշոր ծավալներով:

Կիպրոսի հետ զարգացել էին ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական և մշակութային բնույթի կապերը[2]:

Կանադայի հետ տնտեսական համագործակցության դրսևորումներից էին Հայաստանում 1992 թ. կանադական «Արմենքրեյդ» բաժնետիրական ընկերության մըշտական ներկայացուցչության հիմնումը[3], «Գրանդ տոբակո» համատեղ ձեռնարկության ստեղծումը[4] և այլն:

Միջպետական սերտ կապերէր ստեղծվել Հայաստանի Հնդկաստանի միջև ոսկու արդյունաբերության բնագավառում[5]: 2001թ. տվյալներով գործում էին 50-ից ավելի հայ-լիբանանյան համատեղ ձեռնարկություններ[6]: Ըստ էության համանման իրավիճակ էր 2000 թվականի տվյալներով Հայաստանի հետ տնտեսական կապեր ունեցող բոլոր 50-55 երկրների[7] պարագայում:

Հայաստանի համար համագործակցության կարևորություն ներկայացնող ձևերից էր ՀՀ-ին մարդասիրական օգնության տրամադրումը: Օրինակ, Իտալիան տակավին 1994թ. Հայաստան էր առաքել մոտ 3 մլն դոլար արժողությամբ մարդասիրական օգնություն[8]: 1997թ. Հայաստանի Հանրապետություն էր ներմուծվել 94,1 մլն ԱՄՆ դոլարի մարդասիրական օգնություն աշխարհի շուրջ 30 երկրներից, այդ թվում և Հունաստանից, Շվեյցարիայից, Ճապոնիայից և այլն[9]: Միայն Ճապոնիայի կառավարությունը այդ տարվա սկզբից մինչև գարուն Հայաստանին էր տրամադրել 8,5 մլն դոլարի անհատույց ֆինանսական օգնություն, ինչպես նաև՝ 1 մլն 250 հազար դոլարի ցորեն[10]: Ի դեպ Ճապոնական կառավարությունը դեռ 1995 թվականին Հայաստանի գյուղատնտեսությանը աջակցելու նպատակով ՀՀ-ին տրամադրել էր շուրջ 56 մլն իենի մարդասիրական օգնություն[11]: Հետագայում էլ, ինչպես վերը նշված է, ճապոնական կողմը շարունակում էր Հայաստանին ցածր տոկոսադրույքներով տրամադրել վարկեր[12] և հատկապես ցուցաբերել մարդասիրական օգնություն: Բերված փաստերին ավելացնենք ևս մեկը: 2000 թվականին Ճապոնիան, որպես մարդասիրական օգնություն, Հայաստան էր առաքել 15 հացահատիկահավաք կոմբայն, 50

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Եր., 2001 թ., էջ 472-473:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 1 փետրվարի, 1994 թ., 23 հուլիսի, 1998 թ., 19 մայիսի, 1999 թ., Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր № 19 (85), 16 հուլիսի, 1999 թ., էջ 12:
[3] «Հայաստանի Հանրապետություն», 22 մայիսի, 1992 թ.:
[4] **Մելքումյան Ս.**, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002 թ., էջ 264:
[5] «Հայաստանի Հանրապետություն», 19 փետրվարի, 1999 թ., Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ. 8 (1036), 30 ապրիլի, 1993 թ., էջ 50, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, հ. 7-8 (1107-1108), ապրիլ, 1996 թ., էջ 122-123, ՀԱԱ, ֆ. 113, ց. 171, գ. 100, թ. 1:
[6] «Հայաստանի Հանրապետություն», 4 մայիսի, 2001 թ.:
[7] **Մելքումյան Ս.**, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002 թ., էջ 248:
[8] «Հայաստանի Հանրապետություն», 26 հուլիսի, 1994 թ.:
[9] «Հայաստանի Հանրապետություն», 7 մայիսի, 1998 թ.:
[10] Նույնը, 11 ապրիլի, 1997 թ.:
[11] ՀԱԱ, ֆ. 113, ց. 175, գ. 311, թ. 1-12:
[12] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 24 (90), 3 սեպտեմբերի, 1999 թ., էջ 147:

տրակտոր և այլ գյուղտեխնիկա[1], որոնց խիստ կարիքն ուներ ՀՀ գյուղատնտեսությունը: Մեկ տարի անց Ճապոնիայից, որպես օգնություն, Հայաստան բերվեց ևս 78 տրակտոր[2]: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանին 2000 թվականին ցույց տված մարդասիրական օգնությանը ամբողջությամբ, ապա այդ տարի աշխարհի շատ երկրներից, այդ թվում Իտալիայից, Մեծ Բրիտանիայից, Նիդերլանդներից, Դանիայից, Կանադայից, Լիբանանից և այլն, Հայաստանին տրամադրվել է շուրջ 76 մլն դոլարի օգնություն[3]: Հարաբերությունները զարգանում էին նաև Հայաստանի և արտասահմանի փոխգործունեության տնտեսական զարգացումների առանցքը կազմող ներդրումների հարցում: Այսպես, 1998-2000 թթ. ընթացքում ՀՀ տնտեսության ամենատարբեր ոլորտներում դրսից կատարվել են 550 մլն դոլարի ներդրումներ՝ հիմնականում արդյունաբերության ոլորտում: Խոշոր ներդրումներ են կատարվել Գերմանիայից՝ լեռնարդյունաբերության բնագավառում («Մանես-Վալեքս», «Մաքուր երկաթ» և այլն), Կանադայից՝ «Հայոսկի» ձեռնարկության մեջ[4] և այլն:

Արդարությունը պահանջում է միաժամանակ արձանագրել, որ ներդրումներ կատարել են նաև սփյուռքահայերը, որոնց մոտ գերիշխում էր ոչ այնքան տնտեսական շահը, որքան ազգային գործոնը: ՀՀ իշխանությունների կողմից ներդրումային գրավիչ միջավայրի ապահովման պարագայում կասկածից վեր է, որ ներդրումների ծավալները կտրուկ կաճեն:

Эдуард Погосян, Сущность международных отношенний суверенной Армении со странами Западной Европы и ряда других государств (1990-2001 гг.) – В статье показано, что приобретение независимости Арменией открыло перед РА реальные возможности для установления межгосударственных отношений с государствами Западной Европы и со многими другими странами мира, имея целью установления с ними как многоплановых взаимоотношений, так и культурное, политическое, экономическое интегрирование в мировое сообщество.

Взаимоотношения с иностранными государствами строились с учетом коренных экономических и политических интересов суверенной Армении, главным из которых являлось установление государтсвенной независимости страны.

Edward Poghosyan,The character of interstate relations of the independent Armenia with Western Europe and with several countries of the world (1990-2001) - The article shows that the independence of Armenia gave the state some real opportunities for relationship with the Western European countries and many other countries of the world and the aim of the process was settling semi side relations as well as cultural, political, economical integration into the world community.

The relationship with foreign countries was built along with taking into account the local, economical and political interests of the independent Armenia and the main one was strengthening the state independence.

---

[1] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 13 (111), 22 հունիսի, 2000 թ., էջ 59-60:

[2] Նույնը, № 11 (143), 11 ապրիլի, 2001 թ., էջ 113-114:

[3] Մելքումյան Ս., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002 թ., էջ 248-249:

[4] «Հայաստանի Հանրապետություն», 18 նոյեմբերի, 2000 թ.: